ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2024 թվականի թիվ 29-Ա

ք. Երևան

«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՀ N 330 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ընկերության 2024 թվականի մարտի 25-ի՝ ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու և 2022 թվականի մայիսի 18-ին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության ԿՀ N 330 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

Բավարարել «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումները՝

1. Տրամադրել «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ընկերությանը ՀՀ Շիրակի, Արագածոտնի և Լոռու մարզերի տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա:

2. Ուժը կորցրած ճանաչել «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ընկերությանը 2022 թվականի մայիսի 18-ին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության ԿՀ N 330 լիցենզիան՝ ՀՀ Շիրակի, Արագածոտնի և Լոռու մարզերի տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիայի տրամադրմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. ապրիլի 12
ք. Երևան